Մրցույթի հայտարարություն

«Արաքսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) <<Հանրակրթության մասին>> օրենքի 12րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

1. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Արաքսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում 2022 թվականի հունիսի 1-ից մինչև հունիսի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 15:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի հունիսի 29-ին՝ ժամը 15:00-ին, «Արաքսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ Արմավիրի մարզ, գ. Արաքս, Դրոյի 6:

Տեղեկությունների համար դիմել

Հեռախոս՝ 077-82-29-18

Էլ. փոստ՝ araqsimijnakarq.dproc@mail.ru:

ՔԱՂՎԱԾՔ

« Արաքսի միջնակարգ դպրոց», «Մեծամորի միջնակարգ դպրոց» «Հայկաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների կոլեգիալ կառավարման մարմնի՝ միացյալ խորհրդի 2022թ. մայիսի 26-ի նիստի №10 արձանագրությունից

Նիստը գումարվել է 2022թ մայիսի 26 - ին:
Նիստին մասնակցում են խորհրդի 15 /տասնհինգ/ անդամները:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. Մարգարյան
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. Հակոբյան

ՕՐԱԿԱՐԳ

1. «Արաքսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար, հավակնորդ չլինելու պատճառով, հայտարարվում է նոր մրցույթ:

/զեկ. խորհրդի նախագահ՝ Կ. Մարգարյան /

ԼՍԵՑԻՆ՝

Կառավարման խորհրդի նախագահի զեկույցը «Արաքսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր տեղի հավակնորդ չլինելու պատճառով հայտարարվում է նոր մրցույթ: Փաստաթղթերի ընդունումը 2022թ-ի հունիսի 1-ից մինչև հունիսի 17-ը,մրցույթի նշանակման օրը հունիսի 29-ին:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Առաջնորդվել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետին համապատասխան՝ ՀՀ կառավարության որոշման 2.1 և 2.2 կետերով:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. Մարգարյան